

«Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց ապառիկ ֆինանսավորման ծառայության մատուցման հիմնական պայմաններ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 29.12.2020թ. թիվ 01/157/20 որոշմամբ,
գործող խմբագրությունը՝ 19.05.2023թ. թիվ 03/62/23 որոշմամբ և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:

1. Կիրառվող եզրույթներ և սահմանումներ

1.1. Սույն «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց ապառիկ ֆինանսավորման հիմնական պայմաններում մեծատառով օգտագործված բառերն ու արտահայտություններն ունեն ստորև սահմանված իմաստը.

Բանկ՝	«Ամերիաբանկ» ՓԲԸ:
Պայմաններ՝	Սույն «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց ապառիկ ֆինանսավորման հիմնական պայմանները՝ Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով և լրացումներով:
Սակագներ	«Ապառիկ ֆինանսավորման պայմաններ» ¹ Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով և լրացումներով, ինչպես նաև Բանկի կողմից ժամանակ առ ժամանակ հրապարակվող արշավների շրջանակներում «Ապառիկ ֆինանսավորման» ծառայության սահմանված այլ պայմանները, որոնք կարող են տարբերվել «Ապառիկ ֆինանսավորման պայմաններով» սահմանված պայմաններից կամ գործել ի լրումն դրանց:
Ընկերություն՝	Բանկի հետ համագործակցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը ֆիզիկական անձանց մատուցում է ծառայություններ, կատարում աշխատանքներ և/կամ վաճառում է ապրանքներ:
Ապրանք՝	Ընկերության կողմից վաճառվող այն ապրանքները, այդ թվում նաև՝ Արևային համակարգերը, որոնց գնումը կարող է Սակագներով և Պայմաններով սահմանված կարգով ֆինանսավորվել Բանկի կողմից:
Արևային համակարգեր՝	Արևային էլեկտրակայաններ, ջրատաքացման համակարգեր և նմանատիպ այլ գույք:
Ծառայություն՝	Ընկերության կողմից մատուցվող այն ծառայությունները և/կամ կատարվող աշխատանքները, որոնց գնումը կարող է Սակագներով և Պայմաններով սահմանված կարգով ֆինանսավորվել Բանկի կողմից:
Հաճախորդ՝	Պայմաններով սահմանված կարգով Ընկերությունից ապառիկ կարգով Ապրանք գնող կամ Ընկերության կողմից մատուցվող Ծառայությունից օգտվող ֆիզիկական անձ:
Կողմ կամ Կողմեր՝	Բանկը կամ Հաճախորդը՝ եզակիով կիրառման դեպքում, Բանկը և Հաճախորդը միասին՝ հոգնակիով կիրառման դեպքում:
Ապառիկ ֆինանսավորման ծառայություն՝	Բանկի կողմից մատուցվող ծառայությունն է, որը ներառում է Պայմաններով և Սակագներով սահմանված կարգով և պայմաններով՝ ➢ Ապրանքի ապառիկ վաճառքի/ Ծառայությունների վճարովի մատուցման/ Խառը պայմանագրի կնքումը, ➢ Ապրանքի ապառիկ վաճառքի/ Ծառայությունների վճարովի մատուցման/ Խառը պայմանագրից բխող Հաճախորդի նկատմամբ Ընկերության դրամական պահանջի զիջումը Բանկին և զիջված դրամական պահանջի գնումը Բանկի կողմից, ➢ Օֆերտայի Ակցեպտավորումը (Պարտքի տարաժամկետ մարման պայմանագրի կնքումը):
Ապրանքի ապառիկ վաճառքի պայմանագիր	Բանկի կողմից սահմանված ձևանմուշով Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը Հաճախորդին ապառիկ կարգով վաճառում է Ապրանք, որը Հաճախորդին հանձնելու պահից մինչև դրա համար վճարելը համարվում է Ընկերության մոտ գրավ դրված՝ ի ապահովումն Ապրանքի համար վճարելու Հաճախորդի պարտավորության կատարման:
Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր՝	Բանկի կողմից սահմանված ձևանմուշով Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը Հաճախորդին մատուցում է Ծառայություն, իսկ Հաճախորդը պարտավորվում է վճարել դրա դիմաց:

¹«Ամերիաբանկ» ՓԲԸ Ապառիկ ֆինանսավորման պայմաններ (11RBD PL 72-34), ընդունվել է Բանկի Տնօրինության 22.11.2017թ. թիվ 01/35/17 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

Խառը պայմանագիր՝	Բանկի կողմից սահմանված ձևանմուշով Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը Հաճախորդին ապառիկ կարգով վաճառում է Ապրանք և մատուցում է Ծառայություն, ընդ որում՝ ձեռք բերվող Ապրանքը Հաճախորդին հանձնելու պահից մինչև Խառը պայմանագրով նրա վճարային պարտավորությունների կատարելը համարվում է Ընկերության մոտ գրավ դրված՝ ի ապահովումն տվյալ պայմանագրով Հաճախորդի վճարային պարտավորության կատարման:
Արևային համակարգերի մատակարարման և աշխատանքների կատարման պայմանագիր՝	Բանկի կողմից սահմանված ձևանմուշով Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը Հաճախորդին ապառիկ կարգով մատակարարում է Արևային համակարգեր և կատարում է դրանց տեղադրման, կարգաբերման, փորձարկման և շահագործման հանձնման հետ կապված աշխատանքները, ընդ որում՝ Ապրանքները Հաճախորդին հանձնելու պահից մինչև տվյալ պայմանագրերից բխող Հաճախորդի վճարային պարտավորությունների կատարելը Արևային համակարգերը համարվում են Ընկերության մոտ գրավ դրված՝ ի ապահովումն տվյալ պայմանագրերից բխող Հաճախորդի վճարային պարտավորությունների կատարման:
Ապառիկ գնման պայմանագիր՝ Պայմանագիր՝	Ապրանքի ապառիկ վաճառքի, Ծառայությունների վճարովի մատուցման, Խառը և/կամ Արևային համակարգերի մատակարարման և աշխատանքների կատարման պայմանագիրը: Բանկի կողմից սահմանված ձևանմուշով Պայմաններով նախատեսված կարգով Հաճախորդի կողմից ներկայացված Օֆերտայի Ակցեպտավորման միջոցով Բանկի և Հաճախորդի միջև կնքվող Պարտքի տարաժամկետ մարման պայմանագիր, որով և Պայմաններով ու Սակագներով կարգավորվում են Ապառիկ գնման պայմանագրից բխող Ընկերության դրամական պահանջը Բանկին զիջվելու դեպքում այդ պարտավորության գումարը Հաճախորդի կողմից Բանկին վերադարձնելու պայմանները:
Օֆերտա՝	Բանկի կողմից սահմանված ձևանմուշով Հաճախորդի կողմից Բանկին ուղղված՝ Պարտքի տարաժամկետ մարման պայմանագիր կնքելու գրավոր առաջարկ, որում նշվում են Բանկի ֆինանսավորման դեպքում Կրեդիտի էական պայմանները, ներառյալ՝ Պայմանների 3.1 կետում նշվածները:
Ակցեպտ՝	Բանկի կողմից Օֆերտայի ընդունումն է: Բանկի կողմից Օֆերտայի Ակցեպտն իրականացվում է Պայմաններում և Օֆերտայում շարադրված կանոնների համաձայն: Բանկի կողմից Օֆերտայի Ակցեպտը հանգեցնում է Բանկի և Հաճախորդի միջև Պարտքի տարաժամկետ մարման պայմանագրի կնքմանը:
Կրեդիտ՝	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Բանկի հանդեպ առկա Հաճախորդի պարտքի գումարը:
Տոկոսադրույք՝	Պայմանագրում նշված անվանական տարեկան տոկոսադրույքը:
Տոկոսագումար՝	Տոկոսադրույքով Կրեդիտի գումարի նկատմամբ հաշվարկված տոկոսների գումարը:
Սպասարկման վճար՝	Պայմանագրով սահմանված սպասարկման վճարը:
Ժամանակացույց՝	Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ով սահմանված Կրեդիտի, Տոկոսագումարների և Սպասարկման վճարների մարման ժամանակացույցը:
Տուժանք՝	Պայմանագրով սահմանված կարգով վճարման պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Պայմանագրով նախատեսված տուժանքները:

2. Պայմանագրի կնքման կարգը և պայմանները: Կարգավորման առարկան: Մեկնաբանման կանոնները:

- 2.1. Պայմանները սահմանում են Բանկի կողմից ֆիզիկական անձանց «Ապառիկ ֆինանսավորման» ծառայության մատուցման հետ կապված փոխհարաբերությունների հիմնական պայմանները:
- 2.2. Պայմանները հանդիսանում են Օֆերտա անելու հրավեր, և դրանց ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները ծագում են/ուժի մեջ են մտնում Հաճախորդի կողմից Պայմաններին և Սակագներին համապատասխան ու Բանկի համար ընդունելի պայմաններով Օֆերտա ներկայացնելու և Բանկի կողմից այն ակցեպտավորելու պահից, որը և այդ պահից, Պայմանների և Սակագների հետ միասին, համարվում է Կողմերի միջև կնքված մեկ ամբողջական պայմանագիր և գործում է մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:
- 2.3. Թղթային եղանակով ներկայացված Օֆերտան կազմվում է 2 (երկու) հավասարազոր օրինակներով, որոնցից մեկը մնում է Հաճախորդի մոտ, իսկ մյուսը՝ Բանկի: Օնլայն եղանակով ներկայացված օֆերտան կազմվում է էլեկտրոնային եղանակով, որը հասանելի է դառնում Հաճախորդին՝ Բանկի կողմից էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով: Պայմանագրի կնքման ամսաթիվն է համարվում Բանկի կողմից Ակցեպտի ուղարկման օրը, իսկ կնքման վայրը՝ Բանկի գտնվելու վայրը: Ակցեպտավորումն իրականացվում է Օֆերտայում նշված Հաճախորդի բջջային հեռախոսահամարներից որևէ մեկին Բանկի կողմից Օֆերտայի ակցեպտավորման վերաբերյալ հաղորդագրություն ուղարկելու միջոցով՝ Հաճախորդի կողմից Օֆերտայի ստորագրման օրվանից 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում (ակցեպտավորման համար ժամկետ), եթե Օֆերտայով ակցեպտավորման միջոցի և ժամկետների վերաբերյալ այլ պայման սահմանված չէ:

- 2.4. Օֆերտայում նշված Հաճախորդի բջջային հեռախոսահամարներից որևէ մեկին Բանկի կողմից Օֆերտայի ակցեպտն ուղարկելու դեպքում Հաճախորդը կհամարվի Ակցեպտը ստացած, եթե վերջինս մինչ այդ գրավոր ծանուցում չի ներկայացրել Բանկին համապատասխան բջջային հեռախոսահամարի փոփոխման վերաբերյալ:
- 2.5. Օֆերտայում նշված Հաճախորդի վավերապայմաններով Ակցեպտի, ծանուցումների և տեղեկատվության ուղարկման դեպքում երրորդ անձանց կողմից դրանց ծանոթանալու և տեղեկանալու ռիսկը կրում է Հաճախորդը:
- 2.6. Թղթային եղանակով ներկայացված Օֆերտայի Ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ Բանկի կողմից գործողություններ ձեռնարկելը համարվում է Ակցեպտ:
- 2.7. Օֆերտան չի կարող հետ կանչվել դրա ակցեպտավորման համար սահմանված ժամկետում:
- 2.8. Պայմանագրի կնքումը փաստում է դրանում նշված՝ Հաճախորդի և Ընկերության միջև կնքված Ապառիկ գնման պայմանագրի հիման վրա Հաճախորդի հանդեպ Ընկերության ունեցած դրամական պահանջի զիջումը Բանկին, որում շարադրված պայմանների համաձայն, Բանկը Հաճախորդին հնարավորություն է ընձեռում տարաժամկետ վճարելու համապատասխան պարտքի գումարը, իսկ Հաճախորդը պարտավորվում է վճարել այն՝ հաշվարկված տոկոսների ու հաշվի սպասարկման վճարների գումարների հետ միասին: Ակցեպտը միաժամանակ հանդիսանում է Օֆերտայում նշված դրամական պահանջի զիջման մասին ծանուցում, ուստի դրա ստանալու պահից Հաճախորդը համարվում է ծանուցված՝ Ընկերության հետ վերջինիս կնքված և Օֆերտայում նշված՝ համապատասխան պայմանագրից ծագող Ընկերության դրամական պահանջը Բանկին զիջված լինելու մասին:
- 2.9. Պայմանագրին կատարված բոլոր հղումները ներառում են դրա անբաժանելի մասը կազմող՝ Օֆերտան, Պայմանները և Մակագները, եթե այլ բան ուղղակիորեն նշված չէ:
- 2.10. Եթե Պայմանագրի պայմաններից կամ դրույթներից որևէ մեկը իրավասու մարմնի կողմից որևէ պատճառով և որևէ չափով/մասով ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա այդ դրույթին պետք է տրվի հնարավորինս սահմանափակ մեկնաբանություն, և դա չպետք է ազդի Պայմանագրի մյուս բոլոր պայմանների և դրույթների վավերականության վրա, որոնք և կպահպանեն իրենց ուժը և կկիրառվեն՝ օրենքով թույլատրելի առավելագույն սահմաններում:
- 2.11. Կողմերի միջև իրավահարաբերությունները Պայմանների ներքո, սակայն վերջինից տարբերվող դրույթների մասով, կարող են կարգավորվել Օֆերտայում այդ պայմանը նշելու կամ ի լրումն Պայմանագրի համաձայնագրեր կնքելու միջոցով, որը Կողմերի համաձայնությամբ կարող է կատարվել ծառայության տրամադրման և սպասարկման ցանկացած փուլում:

3. Կրեդիտի հիմնական պայմանները: Հաշվարկները և վճարումների կարգը:

- 3.1. Կրեդիտի հստակ պայմանները, ներառյալ, բայց չսահմանափակվելով, Կրեդիտի գումարի, անվանական և փաստացի տարեկան տոկոսադրույթների, Սպասարկման վճարների, ընդհանուր ծախսի, Տուժանքների չափերը, Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ապահովման միջոցները, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում Կողմերի հաղորդակցման՝ Հաճախորդի համար նախընտրելի եղանակները նշվում են Օֆերտայում:
- 3.2. Կրեդիտի տրամադրման եղանակն է՝ անկանխիկ, միանվագ: Կրեդիտի մարման կարգն է՝ **ԱՆՈՒՒՏԵՏԱՅԻՆ**, այսինքն՝ Կրեդիտի գումարի, Տոկոսագումարների և Սպասարկման վճարների հանրագումարը վճարվում է հավասարաչափ:
- 3.3. Տոկոսագումարները հաշվարկվում են Կրեդիտի գումարի նվազող մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով՝ տարին ընդունելով 365 օր: Սպասարկման վճարները հաշվարկվում են Կրեդիտի գումարի նկատմամբ, ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա սկզբին:
- 3.4. Օֆերտայում արտացոլված տարեկան փաստացի տոկոսադրույթի և ընդհանուր ծախսի գումարի չափերը հաշվարկված են դրա ներկայացման օրվա դրությամբ և Պայմանագրի գործողության ընթացքում կարող են փոփոխվել Բանկի կողմից Պայմաններով սահմանված դեպքերում և կարգով Սպասարկման վճարի չափի փոփոխման, Հաճախորդի կողմից Կրեդիտի գումարը Պայմանագրով սահմանված ժամկետից շուտ մարելու կամ դրանց հաշվարկում ներառված այլ տարրերի փոփոխման դեպքերում:
- 3.5. Կրեդիտի գումարը, Տոկոսագումարները, Սպասարկման վճարները Հաճախորդի կողմից վճարվում են Բանկին Ժամանակացույցով սահմանված չափերով և ժամկետներում:
- 3.6. Կրեդիտի գումարը, Տոկոսագումարներ և Սպասարկման վճարները համարվում են վճարված՝ դրանք Բանկի դրամարկղ մուծելու կամ Բանկի թղթակցային հաշվին մուտքագրվելու պահից:
- 3.7. Պայմանագրից բխող Հաճախորդի ցանկացած վճարում ուղղվում է Հաճախորդի՝ Պայմանագրից բխող պարտքի մարմանը, որոնց հերթականությունը որոշում է Բանկը:
- 3.8. Հաճախորդը համաձայնում և հանձնարարում է, որ Բանկ դիմած երրորդ անձին, ով տիրապետում է Հաճախորդի վարկային պարտավորությունների մասին Բանկի համար ընդունելի չափով բավարար տվյալների, Բանկը տրամադրի հնարավորություն Հաճախորդի վարկային պարտավորությունների մարումն իրականացնելու համար:
- 3.9. Բանկն իրավունք ունի Հաճախորդի՝ Բանկում բանկային հաշիվ ունենալու դեպքում վերջինիս ցանկացած բանկային հաշվից (այդ թվում՝ հաշվարկային, քարտային, ավանդային հաշիվներից) անվիճելի կարգով, առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության կամ համաձայնության, գանձել Պայմանագրի համաձայն Հաճախորդի կողմից Բանկին վճարման ենթակա գումարները, այդ թվում՝ Կրեդիտի գումարը և/կամ Տոկոսագումարները և/կամ Սպասարկման վճարները և/կամ առկայության դեպքում՝ Տուժանքների գումարները և/կամ Պայմանագրի ուժով Բանկին վճարման ենթակա այլ գումարները: Սույն կետով նախատեսված անակցեպտ գանձումը Բանկն իրավունք ունի կատարել համապատասխան գումարները վճարման ենթակա դառնալու օրը և/կամ այդ օրվան հաջորդող օրերին՝ մինչև այդ գումարների փաստացի վճարման (այդ թվում՝ անակցեպտ գանձման միջոցով) օրը: Վճարման ենթակա գումարների անակցեպտ գանձման համար Հաճախորդի՝ ՀՀ

դրամ արժույթով բանկային հաշիվներին բավարար գումար չլինելու դեպքում, Բանկը համապատասխան գումարները գանձում է Հաճախորդի այլ արժույթով հաշիվներից՝ արժույթների միջև փոխարկումը իրականացնելով տվյալ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով:

Սույն կետում սահմանված իրավունքը Բանկն իրականացնում է սեփական հայեցողությամբ և այն Հաճախորդի կողմից հետագայում չի կարող վկայակոչվել և հիմք հանդիսանալ Պայմանագրով ստանձնած իր վճարային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Պայմանագրի համաձայն Բանկի կողմից իր նկատմամբ կիրառված Տուժանքների հաշվարկման և գանձման փաստը վիճարկելու համար:

- 3.10. Պայմանագրից ծագած պարտավորություններով հաշվանցի կատարումը կարող է իրականացվել միայն Բանկի համաձայնությամբ:
- 3.11. Բանկն իրավունք ունի Պայմանագրի հիման վրա Հաճախորդի նկատմամբ առկա դրամական պահանջը և դրա կատարման ապահովման միջոցների նկատմամբ իր իրավունքները զիջել երրորդ անձանց: Դրամական պահանջը երրորդ անձանց զիջելու պահից Տոկոսագումարների և Սպասարկման վճարների հաշվարկը դադարեցվում է, եթե զիջման մասին Հաճախորդին ուղղված ծանուցմամբ այլ բան սահմանված չէ: Դրամական պահանջի զիջման պահից դրա առնչությամբ Պայմանագրի մյուս պայմանները (ներառյալ՝ Հաճախորդի իրավունքները ու պարտականությունները) շարունակում են նույնությամբ գործել դրամական պահանջի իրավունքը ձեռք բերած անձի նկատմամբ, բացառությամբ այն պայմանների, որոնց գործողությունը պայմանավորված է Պայմանագրով պարտատիրոջ հատուկ կարգավիճակով, այդ թվում՝ բանկային գործունեություն իրականացնելու հատուկ թույլտվություն (լիցենզիա) ունենալու հանգամանքով:

4. Ապրանքների ապառիկ կարգով ձեռքբերման առանձնահատկություններ:

- 4.1. Ապառիկ ֆինանսավորման ծառայության շրջանակներում Ապրանք ձեռք բերելու դեպքում՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից Հաճախորդը Օֆերտայում նշված Ապրանքը գրավադրում է հոգուտ Բանկի՝ ի ապահովումն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման՝ հանդես գալով որպես գրավատու:
- 4.2. Գրավի առարկա հանդիսացող Ապրանքը չի անցնում Բանկի տիրապետմանը և թողնվում է գրավատու Հաճախորդի մոտ:
- 4.3. Հաճախորդն իրավունք ունի տիրապետել և օգտագործել գրավի առարկա հանդիսացող Ապրանքը՝ դրա նշանակությամբ համապատասխան, իսկ Բանկի հանդեպ վճարային պարտավորություններն ամբողջությամբ մարելուց հետո՝ ազատորեն տնօրինել այդ գույքը:
- 4.4. Կրեդիտի գումարի և գրավի առարկայի արժեքի հարաբերակցությունը նշվում է Օֆերտայում: Պայմանագրի գործողության ընթացքում գրավի առարկայի վերագնահատում, գրավի դադարեցում, այլ գույքի լրացուցիչ գրավադրման պահանջի առաջադրում Բանկի կողմից չի նախատեսվում, ուստի Կրեդիտի գումարի և գրավի առարկայի արժեքի հարաբերակցությունը Պայմանագրի գործողության ընթացքում մնալու է անփոփոխ: Այնուամենայնիվ, առանձին դեպքերում, եթե Պայմանագրի կնքման պահին չնախատեսված հանգամանքներում տեղի ունենա Կրեդիտի գումարի և գրավի առարկայի արժեքի հարաբերակցության փոփոխություն և դա հանգեցի Պայմանագրի պայմանների փոփոխության, ապա նշված արժեքի փոփոխության մասին Հաճախորդը կտեղեկացվի Պայմանագրի համապատասխան պայմանների փոփոխման վերաբերյալ Բանկի հետ Պայմանագրի լրացուցիչ համաձայնագրի կնքմամբ: Կրեդիտի գումարի և գրավի առարկայի արժեքի հարաբերակցության այնպիսի փոփոխությունների մասին, որոնք չեն հանգեցնում Պայմանագրի պայմանների փոփոխության, Բանկը Հաճախորդին տեղեկացնում է ըստ վերջինիս պահանջի՝ գրավոր կամ բանավոր ձևով՝ այդ պահանջը ներկայացվելու օրվանից 5 /հինգ/ շաբաթանքային օրվա ընթացքում:
- 4.5. Բանկն իրավունք ունի.
- 4.5.1. ստուգել գրավի առարկա հանդիսացող Ապրանքի առկայությունը, վիճակը, պահպանման պայմանները, որի համար Հաճախորդը պարտավոր է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները՝ չխոչընդոտելով այդ գործընթացին:
- 4.5.2. պահանջել Հաճախորդից գրավի առարկա հանդիսացող Ապրանքի պահպանման համար համապատասխան միջոցների ձեռնարկում, դրա ոչնչացման, վնասման կամ փչացման նպատակով կատարվող ցանկացած գործողության դադարեցում:
- 4.5.3. իր համար ընդունելի պայմաններով, ժամկետներով և ապահովագրական ընկերությունների միջոցով իրականացնել գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի՝ իր կողմից որոշված ռիսկերից ապահովագրություն՝ որպես շահառու սահմանելով Հաճախորդին, որի մասին Հաճախորդը ծանուցվում է Բանկի կամ համապատասխան ապահովագրական ընկերության կողմից: Բանկի համար ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկը և վերջիններիս ապահովագրության էական պայմանները հասանելի են Բանկի պաշտոնական ինտերնետային կայք-էջում², ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են տրամադրման համապատասխան ապահովագրական ընկերության կողմից՝ ապահովագրական պայմանագիրը կնքելիս (թղթային կամ էլեկտրոնային եղանակով կամ ապահովագրական պոլիսում/ պայմանագրում նշելով այն հրապարակային աղբյուրը, որտեղ հասանելի են այդ պայմանները): Բանկը կամ համապատասխան ապահովագրական ընկերությունն ապահովագրման փաստի մասին նաև ծանուցում են Հաճախորդին՝ տրամադրելով ապահովագրության էական պայմանները կամ այն հրապարակային աղբյուրը, որտեղ հասանելի են այդ պայմանները, ընդ որում՝ նշված ծանուցումը 10 /տասն/ օրվա ընթացքում չստանալու դեպքում Հաճախորդը պարտավոր է պայմանների ստացման նպատակով դիմելու Բանկին կամ, Բանկից ճշտելով ապահովագրողի տվյալները, ապահովագրողին: Հաճախորդը պարտավոր է ծանոթանալ

² Ապահովագրական ընկերությունների ցանկ՝ <https://ameriabank.am/useful-links>

ապահովագրության էական պայմաններին և կրում է դրանց չճանաչանալուց բխող հնարավոր բացասական հետևանքների ռիսկը: Պայմանների սույն կետում նշված հղումների անհասանելի դառնալը կամ որևէ պատճառով ապահովագրության էական պայմաններին չճանաչանալը որևէ կերպ չեն կարող ազդել Պայմանագրով սահմանված պայմանների և/կամ դրանց մեկնաբանման վրա:

Գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի գծով ապահովագրական հատուցում ստանալու Հաճախորդի պահանջի իրավունքը՝ Հաճախորդի մոտ դրա ծագման պահից, ինչպես նաև գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի գծով շահառուի, այն է՝ Հաճախորդի անվամբ փոխանցված ապահովագրական հատուցման գումարը՝ դրա Բանկ փոխանցվելու պահից, Պայմանագրի կնքման ուժով հանդիսանում են Հաճախորդի կողմից գրավադրված հոգուտ Բանկի ի ապահովումն Պայմանագրով Հաճախորդի ստանձնած պարտավորությունների, այդ թվում՝ Կրեդիտի գումարի, Տոկոսագումարների, Սպասարկման վճարների և Պայմանագրից բխող այլ պարտավորությունների պատշաճ կատարման: Պայմանագրի կնքմամբ՝ Հաճախորդը տալիս է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունն առ այն, որ գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի գծով ստացված ապահովագրական հատուցման գումարները և դրանց նկատմամբ իր պահանջի իրավունքը՝ հոգուտ Բանկի գրավադրված լինելու ուժով, կարող են տնօրինվել Բանկի համաձայնությամբ (հայեցողությամբ)՝ բացառապես Հաճախորդի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման (այդ թվում նաև՝ վաղաժամկետ կատարման) կամ գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի վերանորոգման/ վերականգնման ուղղությամբ:

Բանկն ինքնուրույն է որոշում ապահովագրության պայմանագրերի կնքման և դրանց դադարեցման դեպքերն ու պայմանները, որի շրջանակներում, Բանկն, ի թիվս այլ դեպքերի, իրավունք ունի նաև Պայմանների համաձայն Հաճախորդի նկատմամբ առկա դրամական պահանջը Բանկի կողմից երրորդ անձանց զիջելու դեպքում, դադարեցնել սույն կետի համաձայն կնքված գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի ապահովագրության պայմանագիրը: Սույն կետով սահմանված՝ Արևային համակարգերն ապահովագրելու իրավունքը Բանկն իրականացնում է սեփական հայեցողությամբ և դրա չիրականացումը կամ ոչ ամբողջ ծավալով իրականացումը չեն կարող դիտվել որպես Բանկի պարտավորության խախտում և/կամ դրսևորված անփութություն, ինչպես նաև այդ հանգամանքները չեն կարող որևէ կերպ վկայակոչվել գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի կորստի, ոչնչացման, վնասման կամ այլ դեպքերում պատճառված վնասների հատուցման պահանջներ ներկայացնելու համար, որոնց համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում, քանի որ Բանկը գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի ապահովագրումը նախաձեռնում է սեփական՝ որպես գրավառուի ռիսկերի զսպման նպատակով: Գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի ապահովագրության հետ կապված ծախսը կրում է Հաճախորդը՝ Բանկի կողմից կատարված ծախսը հատուցելու միջոցով, որը, առկայության դեպքում, ներառվում է Սպասարկման վճարի դրույքաչափի մեջ:

Բանկն իրավունք ունի ապահովագրողից ստանալ և վերջինիս տրամադրել գրավի առարկա հանդիսացող Արևային համակարգերի ապահովագրության առնչությամբ ապահովագրական գաղտնիք կազմող ցանկացած տեղեկատվություն:

4.6. Հաճախորդը պարտավոր է.

- 4.6.1. գրավի առարկա հանդիսացող Ապրանքը պահել պատշաճ վիճակում, ինչպես նաև ձեռնպահ մնալ բոլոր այն գործողություններից, որոնք կարող են հանգեցնել գրավի առարկա հանդիսացող Ապրանքի որակական հատկանիշների վատթարացման կամ ոչնչացման:
- 4.6.2. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գրավի առարկա հանդիսացող Ապրանքը պահպանելու, ներառյալ՝ երրորդ անձանց ոտնձգություններից և պահանջներից պաշտպանելու համար, գրավի առարկա հանդիսացող Ապրանքի վիճակը վատթարացնող անցանկալի երևույթների, դեպքերի առաջացման կամ դրա նկատմամբ ոտնձգությունների վերաբերյալ անհապաղ տեղյակ պահել Բանկին:
- 4.6.3. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավի առարկա հանդիսացող Ապրանքը, դրա պահպանման վայրը փոխելու նպատակով, Բանկի առաջին իսկ պահանջով հանձնման-ընդունման ակտով հանձնել վերջինիս:
- 4.6.4. Բանկի առաջին իսկ պահանջով տեղեկացնել գրավի առարկա հանդիսացող Ապրանքի գտնվելու վայրի մասին և հնարավորություն ընձեռել ստուգելու Ապրանքի առկայությունը և վիճակը:
- 4.7. Հաճախորդի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկն իրավունք ունի պարտավորությունը ժամկետանց դադարալու պահից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր պահանջի բավարարումն իրականացնել գրավի առարկա հանդիսացող Ապրանքի հաշվին:
- 4.8. Հաճախորդի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկն իրավունք ունի գրավի առարկա հանդիսացող Ապրանքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն դատական կարգով կամ ՀՀ օրենսդրությամբ չարգելված արտադատական ցանկացած եղանակով, այդ թվում նաև՝ Բանկն իրավունք ունի գրավի առարկա հանդիսացող Ապրանքը Հաճախորդի անունից ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով իրացնել հրապարակային սակարկությունների (այսուհետ՝ Աճուրդ) եղանակով:
- 4.9. Հաճախորդի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկը գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է Հաճախորդին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին, առանց դատարան դիմելու գրավի առարկա հանդիսացող Ապրանքի վրա բռնագանձում տարածելու մասին (այսուհետ՝ Բռնագանձման ծանուցում), որից հետո Բանկն իրավունք ունի խելամիտ քայլեր ձեռնարկել գրավի առարկա հանդիսացող Ապրանքը պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար, իսկ

Հաճախորդը պարտավորվում է չխոչընդոտել Բանկին նշված գործողությունները կատարելիս, այդ թվում նաև՝ ապահովել գրավի առարկա հանդիսացող Ապրանքի ապամոնտաժման և տեղափոխման հնարավորությունը և հանձնմա-ընդունման ակտով փոխանցել այն Բանկին՝ վերջինիս հանձնելով նաև դրա բոլոր պատկանելիքները ու վերաբերող բոլոր փաստաթղթերը (Ապրանքների տեխնիկական տվյալներ (data sheet), տեխնիկական անձնագրեր, որակի հավաստագրեր, շահագործման կանոններ և այլն) և Բանկի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր: Ընդ որում՝ սույն կետում նշված փոխանցումը և համապատասխան ակտի կազմումը չի հանդիսանում գրավի առարկա հանդիսացող Ապրանքի բռնագանձում և երբևէ չի կարող գնահատվել և/կամ մեկնաբանվել առ այն, որ նման փոխանցմամբ կամ ակտ կազմելով գրավի առարկա հանդիսացող Ապրանքն այլևս բռնագանձվել է:

- 4.10. Բռնագանձման ծանուցումը Հաճախորդին, իսկ օրենքով սահմանված դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին, հանձնելուց 2 (երկու) ամիս հետո Բանկը ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ իրացնում է գրավի առարկա հանդիսացող Ապրանքը ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած եղանակով:
- 4.11. Գրավի առարկա հանդիսացող Ապրանքի իրացման դեպքում Հաճախորդը կարող է կրել լրացուցիչ ծախսեր: Գրավի առարկա հանդիսացող Ապրանքի իրացումից ստացված գումարից դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը, ներառյալ իրականացված հարկային պարտավորությունները վճարելու համար անհրաժեշտ գումարները պահելուց հետո, Բանկը բավարարում է Պայմանագրից բխող իր բոլոր պահանջները ամբողջ ծավալով, իսկ մնացած գումարը վերադարձնում է Հաճախորդին:
- 4.12. Եթե գրավի առարկա հանդիսացող Ապրանքի իրացումից հետո Բանկի պահանջները լրիվ ծավալով չեն բավարարվում, Բանկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագանձում տարածել Հաճախորդի այլ գույքի վրա:
- 4.13. Գրավի առարկա հանդիսացող Ապրանքի վրա բռնագանձում տարածելու և այն իրացնելու ու նոր սեփականատիրոջ կողմից գրավի առարկա հանդիսացող Ապրանքի նկատմամբ իրավունքները ծագելու պահից Հաճախորդի՝ գրավի առարկայի նկատմամբ ունեցած բոլոր իրավունքները դադարում են:
- 4.14. Բռնագանձման ծանուցման մեջ սահմանված ժամկետում նշված պարտավորություններն ամբողջությամբ չկատարվելու դեպքում, այդ ժամկետի ավարտի պահից դրանք (Կրեդիտի գումարի մնացորդը, մինչ այդ պահը կուտակված Տոկոսագումարները, Սպասարկման վճարները, Տուժանքներն ու այլ վճարները) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով համարվում են ԿԵՏԱՆՑՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այսինքն՝ Հաճախորդն իրավունք ունեն դադարեցնելու գրավի առարկա հանդիսացող Ապրանքի արտադատական կարգով բռնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով ԿԵՏԱՆՑՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ամբողջությամբ:
- 4.15. **ՀԱՃԱԽՈՐԴԸ ՀԱՎԱՍՏՈՒՄ Է, ՈՐ Ի ԼՐՈՒՄՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՈՒՅՆ ԳԼԽԻ, ՎԵՐՋԻՆՍ ԾԱՆՈԹԱՑԵԼ Է ՆԱԵՎ ՀՀ ՔՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 15-ՐԴ ԳԼԽԻ (ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ 249, 250 ԵՎ 251 ՀՈՂՎԱԾՆԵՐԻ) ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳԻՏԱԿՑՈՒՄ Է ԴՐԱՆՑ՝ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՆՍԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆ Է ԴՐԱՆՑ ՀԵՏ:**

5. Կողմերի հաղորդակցումը: Տեղեկությունների փոխանակումը:

- 5.1. Բանկը Հաճախորդի հետ հաղորդակցվում է, այդ թվում՝ ուղարկում է հաղորդագրություններ, Բանկի կողմից մատուցվող բանկային ծառայությունների հետ կապված փաստաթղթեր, նյութեր և պարագաներ՝ Հաճախորդի հետ համաձայնեցված եղանակով և հաղորդակցման տվյալներով:
- 5.2. Պայմանագրից բխող ցանկացած հաղորդակցումները և ծանուցումները պետք է լինեն գրավոր ձևով, որոնք պետք է ուղարկվեն Հաճախորդի կողմից Պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով: Սույն կետում սահմանված կարգով ուղարկված հաղորդակցումները/ ծանուցումները համարվում են Հաճախորդի կողմից պատշաճ ստացված, եթե դրանք ուղարկվել են հաղորդակցման համապատասխան եղանակի համար Օֆերտայում նշված կամ Պայմանների համաձայն Հաճախորդի կողմից Բանկին հետագայում հայտնաձև կապի միջոցով.
 - 5.2.1. Էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցման դեպքում՝ հաղորդագրությունն ուղարկվելու մասին Էլեկտրոնային հավաստման մեջ նշված պահից (եթե նույնիսկ բացակայում է այն կարգալու մասին հավաստումը), իսկ
 - 5.2.2. փոստային կապի, հեռախոսակապի կամ այլ միջոցներով ծանուցման դեպքում՝ դրանք համապատասխան եղանակով Հաճախորդի համար հասանելի դառնալու պահից:
- 5.3. Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, երբ Պայմանագրից բխող ցանկացած հաղորդակցումներ/ ծանուցումներ ուղարկվել են Հաճախորդի պաշտոնական Էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն ստանալու մասին Էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարգալու մասին Էլեկտրոնային հավաստումը: Այս դեպքում Հաճախորդը համարվում է այս եղանակով պատշաճ ծանուցված՝ հաղորդակցումը/ ծանուցումն ստանալուն հաջորդող 5-րդ (հինգերորդ) օրվանից:
- 5.4. Հաճախորդի ծանուցման հեռախոսահամար, փոստային, Էլեկտրոնային կամ այլ հեռահար կապի հասցե կարող է ծառայել նաև Հաճախորդի կողմից Բանկին տրամադրած ցանկացած հասցե/ կապի միջոց/ հեռախոսահամար, որը նա նշել է Օֆերտայում կամ գրավոր եղանակով տրամադրել է Բանկին կամ այն հասանելի է դարձել այլ եղանակով:
- 5.5. Հաճախորդը համաձայնում է, որ ծանուցումների՝ Պայմանագրով սահմանված եղանակը և կարգը Բանկը կարող է կիրառել Հաճախորդի հետ հաղորդակցման բոլոր դեպքերում, այդ թվում նաև Հաճախորդի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպք/երում, ներառյալ՝ արտադատական բռնագանձման ծանուցումներ, դատական ծանուցումներ/ պահանջագրեր/ նախապահանջներ/ նյութեր/ փաստաթղթեր ներկայացնելու/ տրամադրելու ժամանակ:
- 5.6. Հաճախորդը համաձայնում է, որ Պայմանագրից բխող վեճերի լուծման կամ Կողմերի իրավունքների ու պարտականությունների իրականացման ժամանակ, դատարանը, արբիտրաժային տրիբունալը, ֆինանսական

համակարգի հաշտարարը, ինչպես նաև պետական մարմինները Բանկի պահանջով կարող են կիրառել Հաճախորդի հետ հաղորդակցման/ ծանուցումների ներկայացման/ ուղարկման Պայմանագրով սահմանված կարգը:

- 5.7. Հաճախորդը կրում է իր պաշտոնական էլեկտրոնային փոստին կամ իր կողմից Բանկին տրամադրված հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցագիրը, պահանջագիրը, տեղեկությունները կամ այլ փաստաթղթերը չկարդալու և/կամ երրորդ անձանց հասանելի դառնալու հետ կապված անբարենպաստ հետևանքները:
- 5.8. Հաճախորդը տեղեկացված է, որ էլեկտրոնային եղանակով ուղարկված ցանկացած հաղորդագրություն կարող է ներխուժման և միջամտության ենթարկվել երրորդ անձանց կողմից: Հաճախորդը գիտակցում է նաև, որ իր կողմից նշված փոստային հասցեով իրեն ուղարկվող տեղեկատվությունը կարող է հասանելի դառնալ երրորդ անձանց՝ Բանկի կամքից անկախ պատճառներով: Այդ կապակցությամբ Հաճախորդը հաստատում է, որ Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք կարող են առաջանալ վերը նշված պատճառներով տեղեկատվությունն ուշացումով ստանալու կամ այդ տեղեկատվությունը Բանկի կամքից անկախ պատճառներով կամ ոչ Բանկի մեղքով երրորդ անձանց հասանելի դառնալու հետևանքով:
- 5.9. Բանկը պարտավոր է՝
 - 5.9.1. Հաճախորդի կողմից Օֆերտայով ընտրված եղանակով, երեսնօրյա պարբերականությամբ, Հաճախորդին գրավոր ձևով ներկայացնել վերջինիս՝ Պայմանագրից բխող պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ Հաճախորդի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կիրառվող կամ կիրառված Տուժանքի կամ Հաճախորդի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը:
 - 5.9.2. Հաճախորդի կողմից Օֆերտայով ընտրված եղանակով, առնվազն 1 (մեկ) օր առաջ Հաճախորդին հայտնել մարման ենթակա պարտավորության առկայության մասին, ինչպես նաև Պայմանագրով ստանձնած վճարային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով վարկային բյուրո և/կամ ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստր տրամադրելու մասին:
- 5.10. Բանկն իրավունք ունի իրականացնել Հաճախորդի ֆինանսական դրության ուսումնասիրություն և պահանջել համապատասխան փաստաթղթեր և տեղեկություններ, իսկ Հաճախորդը պարտավորվում է անհրաժեշտության դեպքում նպաստել ուսումնասիրությունների իրականացմանը և Բանկի կողմից առաջադրված ժամկետներում տրամադրել պահանջվող բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները:
- 5.11. Բանկն իրավունք ունի այլ բանկերին, վարկային կազմակերպություններին, վարկային բյուրոներին՝ վերջիններիս պահանջով կամ իր նախաձեռնությամբ տրամադրել Հաճախորդի և նրա հաշիվների, ինչպես նաև դրամային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:
- 5.12. Հաճախորդը համաձայնում է, որ Բանկը Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրի ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձանց, դեպքերում և կարգով, ինչպես նաև.
 - 5.12.1. քրեական հետապնդում իրականացնող մարմիններին՝ զեղծարարության, խարդախության կամ հանցագործության կամ դրանց վերաբերյալ Բանկի կողմից կասկածի կամ Բանկի նկատմամբ վտանգի առկայության դեպքերում,
 - 5.12.2. ապահովագրական ընկերություններին, վերաապահովագրողներին, ապահովագրական հատուցումների տրամադրման գործընթացում փորձաքննություն իրականացնող մասնագիտական անձանց՝ Բանկի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտության դեպքերում և սահմաններում:
 - 5.12.3. ՀՀ հարկային մարմիններին՝ Բանկի՝ Վարկառուի նկատմամբ առաջացած որևէ դրամական պահանջի (ակտիվի) դուրսգրման պարագայում /ներառյալ դուրսգրված ակտիվի առնչությամբ տեղեկատվությունը/:

Սույն կետով տրված համաձայնությունը գործում է անժամկետ՝ անկախ Պայմանագրի դադարման փաստից:
- 5.13. Հաճախորդը պարտավոր է Պայմանագրով սահմանված անձը հաստատող փաստաթղթի տվյալների, հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի, հեռախոսահամարի և այլ վավերապայմանների փոփոխման դեպքում, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տեղեկացնել Բանկին՝ հնարավորության դեպքում տրամադրելով փոփոխված փաստաթղթերը:
- 5.14. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերի առկայության դեպքում Հաճախորդի՝ Բանկին տրամադրված անձնական տվյալների ուղղման, ոչնչացման և/կամ մշակման դադարեցման վերաբերյալ Հաճախորդի գրավոր դիմումը Բանկի կողմից դիտարկվում և ընթացք է տրվում ՀՀ օրենսդրությամբ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:
- 5.15. Սույնով Կողմերը համաձայնում են, որ Հաճախորդի կողմից Կրեդիտի գումարի մնացորդից վաղաժամկետ մասնակի մարում կատարելու դեպքում կրեդիտի մարման նոր ժամանակացույցը Բանկը հասանելի է դարձնում Հաճախորդին «Ինտերնետ Բանկ» համակարգում (եթե տվյալ համակարգը տրամադրված է Հաճախորդին), կամ պարտավորվում է Հաճախորդի առաջին իսկ պահանջով և նրա ցանկությամբ ու ընտրությամբ՝ կամ տրամադրել նոր ժամանակացույցը վերջինիս առձեռն՝ Բանկի տարածքում, կամ Հաճախորդի պահանջով ուղարկել այն Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին: Անկախ տրամադրման եղանակից՝ մարման նոր ժամանակացույցը տրվում է Հաճախորդին միայն միակողմանի ստորագրված և դրոշմակնքված Բանկի համապատասխան աշխատակցի կողմից՝ առանց Հաճախորդի ստորագրության:
- 5.16. Հաճախորդը թույլատրում է Բանկին օգտագործել Հաճախորդի կոնտակտային տվյալները (անուն, ազգանունը, հասցեն և Բանկին տրամադրված ցանկացած հաղորդակցման տվյալները), ինչպես նաև իր հայեցողությամբ և առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ Բանկի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող ընկերություններին

տրամադրել այդ տվյալները՝ Բանկի կողմից ծառայությունների մատուցման, Հաճախորդին ծառայություններ առաջարկելու, մատուցվող ծառայությունները բարելավելու, ինչպես նաև Բանկի կողմից մատուցվող ծառայություններին առնչվող հարցումներ իրականացնելու նպատակով:

- 5.17. Սույնով Հաճախորդը լիազորում է Բանկին Հաճախորդին սպասարկող ցանկացած Բանկից, ինչպես նաև այլ անձանցից, Պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդի անունից, որպես լիազոր ներկայացուցիչ, պահանջել և ստանալ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ հարցումներ կատարել ու ստանալ դրանց պատասխանները՝ թեկուզև դրանք հանդիսանան բանկային և/կամ առևտրային գաղտնիք:
- 5.18. Սույնով Հաճախորդը լիազորում է Բանկին Ընկերությանը տրամադրել և ստանալ Հաճախորդին ապառիկ ֆինանսավորման ծառայության մատուցման շրջանակներում և դրանից բխող ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ պայմանագրային փաթեթը Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ թեկուզև դրանք հանդիսանան բանկային և/կամ առևտրային գաղտնիք:
- 5.19. Հաճախորդը համաձայնում է, որ Բանկի և իր և/կամ իր ներկայացուցչի միջև Բանկի տարածքում կամ իրական ժամանակի ռեժիմում հեռահար ցանկացած կապի միջոցի օգտագործմամբ գրույցը անվտանգության նկատառումներից ելնելով, կարող է ամբողջությամբ ձայնագրվել, և այդ ձայնագրությունը կարող է ունենալ ապացուցողական նշանակություն և օգտագործվել Բանկի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:
- 5.20. Բանկը պարտավոր է պահպանել Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրում փոփոխությունների կատարման կարգը:

- 6.1. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Պայմանագրի և Սակագները՝ այդ մասին Հաճախորդին Պայմանագրով սահմանված կարգով առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով և միաժամանակ Բանկի ինտերնետային էջում՝ www.ameriabank.am հասցեում, փոփոխված պայմանները նոր խմբագրությամբ հրապարակելով:
- 6.2. Պայմանագրի ներքո Կրեդիտի գումարը կարող է վերաֆինանսավորվել Բանկի կողմից ներգրավված վարկային միջոցների հաշվին, որը հնարավորություն է ընձեռում վերաֆինանսավորման պահանջներին համապատասխանող Հաճախորդների նկատմամբ կիրառելի դարձնել Տոկոսադրույքի և/կամ Սպասարկման վճարի ավելի ցածր դրույքաչափ, քան կլիներ այլ հավասար պայմաններում՝ առանց վերաֆինանսավորման (Տոկոսադրույքի և Սպասարկման վճարի հստակ չափն արտացոլվում է Օֆերտայում): Նման դեպքերում՝ եթե այնուամենայնիվ վերաֆինանսավորման պայմաններին Կրեդիտի անհամապատասխանությամբ և/կամ վերաֆինանսավորողի մոտ ազատ միջոցների բացակայությամբ և/կամ վերաֆինանսավորողի կողմից Բանկին տրված վարկի հատկացումների տոկոսադրույքի փոփոխմամբ և/կամ վերաֆինանսավորողի և Բանկի միջև կնքված պայմանագրի դադարմամբ և/կամ այդ պայմանագրով սահմանված այլ հանգամանքներով պայմանավորված Կրեդիտի գումարի վերաֆինանսավորումը մերժվում կամ չեղարկվում (դադարեցվում) է կամ փոխվում են վերաֆինանսավորման պայմանները, ապա Բանկն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում միակողմանիորեն փոխել Տոկոսադրույքի և/կամ Սպասարկման վճարի չափը՝ համապատասխանեցնելով այն չափին, որը սահմանվում է վերաֆինանսավորում չլինելու պայմաններում: Ընդ որում, սույն կետում նշված դեպքեր/և/կամ Տոկոսադրույքի և Սպասարկման վճարի փոփոխման պարագայում դրանց առավելագույն չափերը սահմանվում են Օֆերտայում: Բոլոր դեպքերում, փոփոխված Տոկոսադրույքը և/կամ Սպասարկման վճարի չափը չեն կարող գերազանցել Սակագներով սահմանված Տոկոսադրույքի և/կամ Սպասարկման վճարների առավելագույն չափը, իսկ Տոկոսադրույքի և/կամ Սպասարկման վճարի փոփոխությամբ պայմանավորված տարեկան փաստացի տոկոսադրույքի փոփոխված չափը՝ Սակագներով սահմանված տարեկան փաստացի տոկոսադրույքի առավելագույն չափը: Սույն կետով սահմանված փոփոխության մասին Բանկը պարտավոր է Հաճախորդին ծանուցել Պայմանագրով սահմանված կարգով առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ, որը հիմք է հանդիսանում ծանուցման մեջ նշված ժամկետից փոփոխված Տոկոսադրույքի և/կամ Սպասարկման վճարի չափի կիրառման համար:
- 6.3. ՀՀ օրենսդրության համաձայն Հաճախորդի նախաձեռնությամբ միակողմանիորեն իր հաղորդակցման միջոցը փոփոխելու վերաբերյալ գրավոր դիմում Բանկ ներկայացնելու դեպքում, Բանկն իրավունք ունի փոփոխված հաղորդակցման միջոցը կիրառել նաև Հաճախորդի գրավոր դիմումը ստանալուց մինչև 30-օրյա ժամկետը լրանալն իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Ընդ որում, հաղորդակցման միջոցի տարեկան մեկ անգամից ավելի փոփոխությունները կատարվում են Բանկի համաձայնությամբ՝ Բանկի ներքին իրավական ակտերով և սակագներով սահմանված պայմանների պահպանմամբ:
- 6.4. Բացի Պայմանագրի 6.1, 6.2 և 6.3 կետերում նշված դեպքերից, Պայմանագրում այլ փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել Կողմերի ստորագրությամբ գրավոր համապատասխան փաստաթուղթ կազմելու միջոցով:
- 6.5. Էական չեն կարող համարվել, և, համապատասխանաբար, հիմք հանդիսանալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի հիմքով Պայմանագրի լուծման կամ փոփոխության համար՝ հանգամանքների այնպիսի փոփոխությունները, ինչպիսիք են, ի թիվս այլոց, Հաճախորդի ֆինանսական վիճակի վատթարացումը կամ դրա առաջացման նախադրյալների առկայությունը, այդ թվում նաև՝ կապված շուկայական պայմանների կամ իրավիճակի որևէ փոփոխությունների, ֆինանսական կամ այլ բնույթի ճգնաժամի առաջացման, դրա առաջացման վտանգի կամ ուժգնացման, Հաճախորդի գույքի կամ եկամտի աղբյուրների կորստի, դրանց կազմի և/կամ պարբերականության և/կամ ծավալների որևէ տատանումները և/կամ Հաճախորդի վճարունակության վրա ազդեցություն ունեցող ցանկացած հանգամանքների փոփոխությունները, պետական որևէ մարմնի կամ այլ անձի կողմից տրամադրվող ցանկացած տեսակի արտոնությունների (ներառյալ, բայց չսահմանափակվելով, պարտավորության որևէ մասի սուբսիդավորման, վերաֆինանսավորման, համաֆինանսավորման կամ պարտավորություն որևէ մասի կատարման ուղղությամբ կատարվող ցանկացած տեսակի ծախսերի

հատուցումների/ֆինանսավորման պայմանների, հարկային կամ մաքսային արտոնությունների) ծավալների փոփոխությունները կամ դադարեցումը, տարադրամի փոխարժեքի տատանումները և/կամ սահմանային ռեժիմի սահմանափակումները:

7. Պայմանագրի վաղաժամկետ դադարման, Կրեդիտի վաղաժամկետ մարման դեպքերը:

- 7.1. Բանկն իրավունք ունի վաղաժամկետ լուծելով Պայմանագիրը կամ առանց այն վաղաժամկետ լուծելու՝ Հաճախորդից պահանջել վճարելու Կրեդիտի գումարը, վճարման օրվա դրությամբ հաշվարկված Տոկոսագումարները, Սպասարկման վճարները, Տուժանքները և առկայության դեպքում Պայմանագրի ուժով Բանկին վճարման ենթակա այլ գումարները՝ այդ մասին Հաճախորդին Պայմանագրով սահմանված եղանակով առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով, եթե՝
 - 7.1.1. պարզվի, որ Հաճախորդի կողմից ներկայացված կամ հետագայում ներկայացվող տվյալները (փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը) անարժանահավատ են կամ կեղծ:
 - 7.1.2. Հաճախորդը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում Պայմանագրով ստանձնած որևէ պարտավորություն, այդ թվում նաև՝ որևէ վճարային պարտավորություն:
 - 7.1.3. պարզվի, որ Հաճախորդը ունի կամ ունեցել է Բանկի և/կամ երրորդ անձանց նկատմամբ ստանձնած այլ ֆինանսական պարտավորությունների կատարման կետանցներ և/կամ դասակարգված պարտավորություններ:
 - 7.1.4. առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Կրեդիտի գումարը, Տոկոսագումարները, Սպասարկման վճարները Պայմանագրով սահմանված մարման ժամկետներում չեն վերադարձվի (այդ թվում՝ առկա է սնանկություն կամ սնանկության նախադրյալներ):
 - 7.1.5. Հաճախորդի ակտիվների (գույքի) վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել կամ սահմանափակում է կիրառվել և դա անհապաղ չի վերացվել:
 - 7.1.6. պետական իրավասու մարմինների կողմից Հաճախորդի նկատմամբ հարուցվել է դատական, քրեական, վարչական, սնանկության կամ այլ վարույթ, որը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ վերջինիս ֆինանսական կայունության և/կամ վիճակի վրա:
 - 7.1.7. առկա են ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքեր:
- 7.2. **Հաճախորդն իրավունք ունի՝**
 - 7.2.1. **ԱՍԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿԱՍ ՄԱՍՆԱԿԻ ՎՍՂԱԺԱՄԿԵՏ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԻՐ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՆՁԱՍԾ ՎՃԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՌԱՆՑ ՏՈՒՑԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ ՎՃԱՐԵԼՈՒ: ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁԱՍԾ ՎՃԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՍՂԱԺԱՄԿԵՏ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՄԻՑ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԼՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ՝ ՕՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՎ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ՝ ԱՍՄԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՎ:**
 - 7.2.2. միակողմանիորեն՝ առանց որևէ պատճառաբանության, օրենքով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ օրենքով սահմանված «մտածելու ժամանակի» ընթացքում:
- 7.3. Հաճախորդը պարտավոր է Ապառիկ գնման պայմանագրի լուծման հիմքով Հաճախորդի կողմից Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկի և Ընկերության հետ կատարել փոխադարձ հաշվարկների ստուգում և ստորագրել փոխադարձ հաշվարկների ակտ: Ակտով հաստատվում են դրա կողմերի միջև միմյանց նկատմամբ պահանջների և պարտավորությունների առկայության կամ բացակայության փաստը, ընդ որում նման պահանջների և պարտավորությունների առկայության դեպքում՝ ակտով սահմանվում են նաև դրանց չափը և կողմերը: Հաճախորդը պարտավորվում է ակտի ստորագրման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Բանկին և/կամ Ընկերությանը վճարել ակտով սահմանված՝ Հաճախորդի կողմից Բանկին և/կամ Ընկերությանը վճարման ենթակա գումարները (այդպիսիք ակտով սահմանված լինելու դեպքում):

8. Կողմերի պատասխանատվության պայմանները

- 8.1. Հաճախորդը լրիվ ծավալով (ներառյալ՝ առկայության դեպքում, ապահովման միջոցները) պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
- 8.2. Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության և արժանահավատության համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.3. Հաճախորդի կողմից Պայմանագրով սահմանված վճարային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել վճարելու տույժ՝ Պայմանագրով սահմանված չափերով:
- 8.4. Տուժանքի փաստացի կիրառման դեպքում, Տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:
- 8.5. Պայմանագրով սահմանված կարգով Տուժանքների կիրառումը/վճարումը Հաճախորդին չի ազատում Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարելուց, Բանկի վնասները հատուցելուց, ինչպես նաև չի կարող որևէ կերպ սահմանափակել Բանկի իրավունքները, ներառյալ՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու և/կամ պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելու իրավական հնարավորությունները:
- 8.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Հաճախորդը պարտավոր է Բանկին փոխհատուցել բոլոր տեսակի լրացուցիչ ծախսերը, որոնք կկատարվեն Բանկի կողմից:
- 8.7. **ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁԱՍԾ ՎՃԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՍ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ԲԱՆԿՆ ԱՅՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՎՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՎԱԾ ԿԱՐԳՈՎ 3 (ԵՐԵՔ)**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱՂՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՒ ԵՎ/ԿԱՍ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՈՒԳԻՍՏՐ: ՀԱՃԱԽՈՐԴԸ ԳԻՏԱԿՑՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԻՐ ՏԵՂԵԿԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՒ ՀԱՅՏԵՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԲԱՑԱՍՄԱԿԱՆ ԱԶԻԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՍՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ՈՐԱ ԷԼ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉՂԻՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԻՄ:

- 8.8. Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:
- 8.9. Հաճախորդի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկացման դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրից բխող գործառնությունների կամ ծառայությունների տրամադրման համար, քանի դեռ չի ստացել այդպիսի փաստերի մասին պատշաճ ծանուցում, այդ թվում՝ բավարար փաստաթղթային ապացույցներ, իսկ դրա ստացման դեպքում՝ ստացմանը հաջորդող աշխատանքային օրվանից մինչև իրավահաջորդի կամ այլ օրինական ներկայացուցչի կողմից պատշաճ լիազորությունների ձեռքբերումը և ձևակերպումը, բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը կասեցվում է: Հաճախորդի մահվան դեպքում տուժանքների հաշվարկը կասեցվում է, իսկ Տոկոսագումարների և/կամ Սպասարկման վճարների հավելագրումը չի դադարում: Բանկն իրավունք ունի կասեցնել բանկային գործառնությունների և ծառայությունների տրամադրումը նաև այն դեպքում, եթե սույն կետում նշված փաստերի մասին տեղեկատվություն է ստացել այլ՝ Բանկի կողմից որպես հավաստի գնահատված աղբյուրից:
- 8.10. Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

- 9.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, այն է՝ տուժանքի վճարման կամ վնասի հատուցման պարտավորությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով:
- 9.2. Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ են համարվում այնպիսի արտակարգ հանգամանքները, որոնք ծագել են Պայմանագրի կնքումից հետո՝ չհանդիսանալով Կողմերից որևէ մեկի մեղքի հետևանք, տվյալ պայմաններում ողջամտորեն չէին կարող կանխատեսվել կամ կանխարգելվել Կողմերի կողմից և օբյեկտիվորեն անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ բնական աղետները (երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ և այլն), սոցիալական անկարգությունները, որոնք անհնարին են դարձնում պարտավորության պատշաճ կատարումը:
- 9.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներում հայտնված Կողմը պարտավոր է դրա ծագման պահից 24 (քսանչորս) ժամվա ընթացքում Պայմանագրով նախատեսված կարգով տեղեկացնել մյուս Կողմին այդ մասին: Ընդ որում, Կողմը նշված հանգամանքներում ազատվում է պատասխանատվությունից.
 - 9.3.1. վճարային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ եթե 9.3 կետում նշված տեղեկացման օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է մյուս Կողմի համար բավարար և ընդունելի ապացույցներ անհաղթահարելի ուժի ազդեցության առկայության և պարտավորության պատշաճ կատարման նկատմամբ դրա էական ազդեցության վերաբերյալ: Ընդ որում, մյուս Կողմը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով իր դիրքորոշումն է ներկայացնում անհաղթահարելի ուժի հանգամանքները վկայակոչած Կողմին, իսկ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում դիրքորոշում չհայտնելու դեպքում անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներում հայտնված Կողմի ներկայացրած ապացույցները համարվում են չընդունված:
 - 9.3.2. ոչ վճարային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, եթե պարտավորությունների խախտումը առերևույթ հանդիսանում է սույն գլխով նախատեսված անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք:
- 9.4. Կողմը չի կարող վկայակոչել անհաղթահարելի ուժի առկայության մասին և ազատվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատասխանատվությունից, եթե չեն պահպանվել սույն գլխով նախատեսված կարգը և պայմանները, որպիսի դեպքում շարունակում են գործել Պայմանագրով նախատեսված պատասխանատվության պայմանները:
- 9.5. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքները տևում են 2 (երկու) ամսից ավելի, ապա այն Կողմը, ում նկատմամբ ստանձնած պարտավորությունները չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում այդ հանգամանքների հետևանքով, իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 5 (հինգ) աշխատանքային օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով մյուս Կողմին: Սույն կետի հիման վրա Պայմանագիրը լուծման դեպքում գործում են Պայմանագրի վաղաժամկետ դադարման կապակցությամբ կիրառելի հետևանքները ընդհանուր հիմունքներով՝ Պայմանագրի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ Պայմանագրով ստանձնած վճարային պարտավորությունների վաղաժամկետ կատարման համար նախատեսված տուժանքի (առկայության դեպքում), որը չի կիրառվում:
- 9.6. Եթե Պայմանագրով Կողմի ստանձնած պարտավորություններն ապահովված են գրավով, և գրավի առարկան վնասվել կամ ոչնչացվել է, ապա այդ Կողմը պարտավորվում է Բանկի հետ համաձայնեցված ժամկետում վերականգնել գրավի առարկան

կամ փոխարինել այն մյուս Կողմի համար ընդունելի՝ համարժեք այլ գույքով՝ նույնիսկ եթե գրավի առարկայի վնասը կամ ոչնչացումը հանդիսանում է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք:

- 9.7. Կողմերը սույնով արձանագրում են, որ անհաղթահարելի ուժի առկայությունը չի հանդիսանում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումից ազատման հիմք, եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:

10. Պայմանագրով չկարգավորված հարցերը: Վեճերի լուծման կարգը:

10.1. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

10.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ Երևանի քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի համաձայնությամբ և/կամ ՀՀ օրենսդրության իմպլեմենտիվ նորմերի պահանջներով: Հաճախորդն իրավունք ունի իր իրավունքները պաշտպանել «Ի՞նչ անել, եթե բողոք ունեք» ձևաթղթով սահմանված կարգով, որը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը և կցած է Հաճախորդի կողմից ներկայացվող Օֆերտայի՝ իր օրինակին:

10.3. Հաճախորդը համաձայնում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված և Պայմանագրի նկատմամբ կիրառելի ենթաօրենսդրական ակտերից բխող իրավունքների, պարտավորությունների, պատասխանատվությանն առնչվող ցանկացած անհամաձայնություն, բողոք, պահանջ ունենալու պարագայում մինչ Պայմանների 10.2 կետով սահմանված վեճերի լուծման կարգով առաջնորդվելը, իր համապատասխան անհամաձայնությունը, բողոքը, պահանջը գրավոր ձևով ներկայացնել Բանկ, և Բանկի կողմից մասնակի կամ ամբողջությամբ մերժվելու/ չբավարարվելու կամ այլ կերպ Բանկի հետ համաձայնության չգալու դեպքում միայն դիմել վեճերի լուծման՝ Պայմանների 10.2 կետով սահմանված կարգին:

10.4. Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում պայմանագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով: Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով վիճարկելու իրավունքից ոչ գույքային պահանջների դեպքում և այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը: